ՌՀՀ Իրավունքի Ինստիտուտի
Գիտական Խորհրդի
2025 թվականի 22 դեկտեմբերի N 8(13)
որոշմամբ հաստատված
(լրացումներ՝ 2026 թ. մարտի 18-ի թիվ 3(16))

Նախագահ _____ Թալաքյան Մ.Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իրավունքի ինստիտուտ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Երևան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ավարտական որակավորման աշխատանքներն իրականացվում են բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճանների համապատասխան՝ դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի տեսքով:

Ավարտական աշխատանքն իրենից ներկայացնում է տեսական և կիրառական (էմպիրիկ) ուսումնասիրություն՝ նվիրված իրավագիտության ոլորտի արդի հիմնախնդիրներից որևէ մեկին, որի շրջանակներում շրջանավարտը դրսևորում է անհրաժեշտ տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ՝ փորձելով ինքնուրույն լուծել աշխատանքում առաջադրված մասնագիտական խնդիրները:

Ավարտական որակավորման աշխատանքը պետք է՝

- լինի ինքնուրույն աշխատություն,
- համապատասխանի սահմանված կառուցվածքին և պահանջներին (հաստատված տիտղոսաթերթ, հստակ կառուցվածք, հղումների առկայություն, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկի ճիշտ ձևակերպում և այլն),
- արտացոլի ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և մասնագիտական ոլորտին առնչվող խնդիրներ բարձրացնելու ու լուծումներ առաջադրելու հմտությունները:

Ավարտական որակավորման աշխատանքի բովանդակությունը պետք է համապատասխանի ուսանողի մասնագիտությանը և վերջինիս կողմից ընտրված թեմային:

Այն պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

- տիտղոսաթերթ,
- բովանդակություն,
- հապավումներ (առկայության դեպքում),
- ներածություն (3-5 էջ),
- հիմնական մասը պետք է բաղկացած լինի գլուխներից և ենթագլուխներից,եզրակացություն (2-3էջ),

- օգտագործված գրականության ցանկ,
- հավելվածներ (առկայության դեպքում):

Ավարտական որակավորման աշխատանքի գլուխները պետք է պարունակեն ոչ պակաս քան երկու ենթագլուխ:

Տիտղոսաթերթի օրինակ՝ տե՛ս Հավելված 1:

Բովանդակություն՝ տե՛ս Հավելված 2:

Ներածությունը հանդիսանում է ավարտական որակավորման աշխատանքի հիմնական մասերից մեկը, որտեղ հեղինակը պետք է հիմնավորի թեմայի ընտրությունը, դրա արդիականությունը ժամանակակից գիտության և գործնական կիրառման տեսանկյունից, ցույց տա դրա գիտական նորույթը և ուսումնասիրվածության աստիճանը, ձևավորի հետազոտության օբյեկտը, առարկան և նպատակները, տա հետազոտության ընթացքում կիրառված մեթոդաբանական հիմքը և ուրվագծի աշխատանքի կառուցվածքը:

Օգտագործված գրականության ցանկ՝ տե՛ս Հավելված 3:

Ավարտական աշխատանքի օրիգինալության չափանիշներ

Ավարտական աշխատանքները պետք է լինեն օրիգինալ (բաղկացած օրիգինալ՝ հեղինակային տեքստից, մեջբերումներից և ինքնահղումներից).

- բակալավրի ավարտական աշխատանքում օրիգինալ (հեղինակային) տեքստի ծավալը պետք է լինի **առնվազն 40%;**
- մագիստրոսական թեզում օրիգինալ (հեղինակային) տեքստի ծավալը պետք է լինի **առնվազն 50%:**

Ավարտական աշխատանքները ստուգվում են https://www.antiplagiat.ru/ համակարգում:

Եթե «Անտիպլագիատ» համակարգի կողմից բացահայտվում են մեջբերումների ձևավորման տեխնիկական սխալներ, որոնք գերազանցում են 20 %-ը[1], աշխատանքը չի համարվում օրիգինալ և չի կարող թույլատրվել հանրային պաշտպանության:

Եթե համակարգը ճանաչում է փոխառությունները քողարկելու փորձի առկայությունն ամբողջ աշխատանքում կամ տեքստի առանձին էջերում (կասկածելի, գեներացված տեքստ), ապա դա համարվում է ակադեմիական աշխատանքի կազմման սկզբունքի և թեզի օրիգինալության պահանջների

[1] Ոչ համընկնումը - ոչ պլագիատ

խախտում (ՀՌՀ գիտական խորհրդի 04.07.2017թ. թիվ 33 որոշմամբ հաստատված «ՀՌՀ պետական ավարտական ատեստավորման կանոնակարգ»-ի 19-րդ կետի եւ ՀՌՀ գիտխորհրդի 28.03.2014թ.թիվ 10/1 որոշմամբ հաստատված «ՀՌՀ մագիստրատուրայի կանոնակարգ»-ի համաձայն):

AI միջոցով վերջնական որակավորման թեզի խմբագրված տեքստը կամ թեզը գրելու համար օգտագործված նյութերի թարգմանությունը Antiplagiat համակարգի կողմից նույնականացվում է որպես կասկածելի տեքստ:

Այն դեպքում, երբ համակարգը չի ճանաչում աշխատության մեջ արված մեջբերումը որպես հղում, այլ ներկայացնում է որպես հեղինակի միտք, աշխատանքը համարվում է կասկածելի (առկա է գիտական մեջբերումների ապարատի խախտում):

Եթե ավարտական աշխատանքը չի համապատասխանում օրիգինալության պահանջներին, այն չի կարող թույլատրվել հրապարակայի նպաշտպանության:

Սահմանվում են ավարտական աշխատանքների ստուգման հետևյալ չափանիշները.

Իրավաչափ փոխառություններեն համարվում այլ հեղինակի գաղափարների կամ մտքերի մի մասի օգտագործումն ավարտական աշխատանքում՝ իրական հեղինակին և փոխառության աղբյուրին պարտադիր նշումով (հղումով)՝ ձևավորված մեջբերման համար սահմանված պահանջներով: Իրավաչափ փոխառություն են համարվում՝ հստակ և ճիշտ ձևավորված մեջբերումները, հատվածներ նորմատիվ ակտերից, ընդհանուր գործածելիության արտահայտությունները, օգտագործված գրականության ցանկը:

Վերհանված փոխառությունների օրինաչափությունը և կիրառման համապատասխանելիությունը գնահատելիս ուշադրություն է դարձվում չակերտներին, հղումներին և օգտագործված գրականության ցանկում օգտագործված աղբյուրի հիշատակմանը:

Սխալ փոխառությունը սեփական ստեղծագործության մեջ ուրիշի աշխատանքի մի մասի օգտագործումն է, երբ նշումը (հղումը) իրական հեղինակին և փոխառության աղբյուրին տրված է մեջբերման սահմանված կանոնների խախտմամբ: Սխալ փոխառությունը չի հանդիսանում ուրիշի աշխատանքին (աշխատանքի մասի) հեղինակային իրավունք վերապահելու փորձ: Հայտնաբերված փոխառությունների համապատասխանելիությունը և օրինաչափությունը գնահատելիս ուշադրություն է հրավիրվում հետևյալ կետերի վրա.

- առանձնացված է արդյո՞ք տվյալ փոխառությունը չակերտներով

- առկա է արդյո՞ք հղում տվյալ աղբյուրին աշխատանքի տեքստում
- արդյո՞ք օգտագործված աղբյուրը հիշատակված է գրականության ցանկում:

Ոչ իրավաչափ փոխառություն է համարվում ուրիշի տեքստի ապօրինի օգտագործումն ավարտական աշխատանքում՝ առանց նշելու(հղում կատարելու) փոխառության իրական հեղինակին և աղբյուրին: Ապօրինի փոխառությունը միտումնավոր է, այն ուրիշի աշխատանքին հեղինակություն վերապահելու փորձ է: Ապօրինի փոխառությունը գրագողության ձև է, հեղինակային իրավունքի խախտում: Պարաֆրազավորումը (բառերի վերադասավարում) գրագողության ևս մեկ տարածված տեխնիկա է, որն օգտագործվում է որակավորման աշխատանքներում և բաղկացած է այլ մարդկանց գաղափարները կամ հասկացությունները վերաշարադրելու մեջ, այն է՝ փոխելով նախադասությունների կառուցվածքը, շարադասությունը և այլն: Պարաֆրազավորումները պետք է ուղեկցվեն հեղինակի

և/կամ աղբյուրի մեջբերումներով:

Տեխնիկական փոխառությունը աշխատանքի տեքստում պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների անվանումների, նորմատիվ իրավական կամ դատական ակտերի անվանումների կամ տեքստերի, գրականության ցանկերի օգտագործումն է: Ամբողջությամբ փոխառված և ինքնուրույն չկազմված գրականության ցանկը համարվում է ոչ իրավաչափ փոխառության տեսակ:

Ընդհանուր գործածելիության արտահայտությունները, գիտական տերմինները ևս համարվում են տեխնիկական փոխառության տեսակ:

Ինքնահղումը տեքստի այն հատվածներն են, որոնք համընկնում կամ գրեթե համընկնում են աղբյուրի տեքստի հետ, որի հեղինակը կամ համահեղինակը ստուգվող փաստաթղթի հեղինակն է:

Ավարտական որակավորման աշխատանքի ձևավորման պահանջները

Ավարտական որակավորման աշխատանքը պաշտպանության է ներկայացվում՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:

Բակալավրի ավարտական աշխատանքի համար սահմանվում է 50-60 էջ, իսկ մագիստրոսական թեզի՝ 60-80 էջ:

Թղթի չափսը՝ A4, լուսանցքները՝ աջից՝ 15 մմ, ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ և ներքևից՝ 20 մմ: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին: Տեքստը մուտքագրվում է **Sylfaen** համակարգի տառատեսակների կիրառմամբ: Բուն

տեքստի համար սահմանվում է 12 pt տառաչափը, իսկ գլուխների և ենթագլուխների անվանումների համար՝ 14 pt տառաչափը: Միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold) և գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է
նոր էջից: Տիտղոսաթերթը, որը հանդիսանում է աշխատության առաջինէջը, չի
համարակալվում: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմխորքից: Թեզի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում՝ կենտրոնում: Համարակալումը սկսվում է բովանդակությունից: Ավարտական որակավորման աշխատանքն ավարտվում է օգտագործված գրականության ցանկով, որը ներկայացվում է բնագրի լեզվով: Նշվում են հեղինակի ազգանունը և անվան սկզբնատառը, այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, ամսագրի անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, էջերը կամ գրքի էջերի քանակը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում նշվում է նյութի հղման հասցեն և ծանոթանալու ամսաթիվը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Թույլատրել պաշտպանության
Ամբիոնի վարիչ՝_____2026թ.
(ստորագրություն)

Բակալավրի կրթական ծրագիր

Մասնագիտությունը՝ *042101.00.6* «Իրավագիտություն»

Ավարտական որակավորման աշխատանք

«……. » թեմայով

ԲԿԾ (առկա/հեռակա) 4/5-րդ կուրսի ուսանող

Ա. Ա.Հ.

_____(ստորագրություն)

Գիտական ղեկավար՝
(գիտական աստիճան, պաշտոն)
Ա.Ա.Հ

_____(ստորագրություն)

Երևան 2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ(ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Թույլատրել պաշտպանության
Ամբիոնի վարիչ՝_____2026թ.
(ստորագրություն)

Անուն, ազգանուն, հայրանուն

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԱՆՎԱՆՈՒՄ

Մասնագիտությունը՝ 042101.00.7 «Իրավագիտություն»

Մագիստրոսական կրթական ծրագիր (լրացնել ծրագրի ծածկագիրը և անվանումը)

ՄԿԾ (առկա/հեռակա) 2/3-րդ կուրսի ուսանող

_____(ստորագրություն)

Գիտական ղեկավար՝

_____(ստորագրություն)
Մագիստրոսական ծրագրի ղեկավար
_____(ստորագրություն)

Երևան 2026

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....

Հապավումներ (առկայության դեպքում).....

Ներածություն.....

Գլուխ 1.....

Գլուխ2……

2.1…….

2.2…….

Եզրակացություն……...

Օգտագործված գրականության ցանկ……..

Հավելվածներ……

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

Օգտագործված գրականության ցանկ

Նորմատիվ-իրավական ակտեր և պաշտոնական փաստաթղթեր

Մատենագիտական ցանկում նորմատիվ-իրավական ակտերը պետք է դասավորվեն հաջորդականորեն՝1) ըստիրավաբանական ուժի, և 2) ընդունման ժամանակագրության. երկու դեպքում էլնվազման կարգով:

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 1995 թվականի հուլիսի 5-ին և 2005 և 2015 թվականների փոփոխություններով) // ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118.
2. Constitution of the Federative Republic of Brazil 3rd edition Constitutional text of October 5, 1988, with the alterations introduced by Constitutional Amendments No. 1/1992 through 64/
3. Հայաստանի Հանրապետության օրենքը «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՕ-145-Ն // ՀՀՊՏ 2018.03.30/24 (1382).1 Հոդ.311.
4. Հայաստանի Հանրապետության Նախագահի 13.12.1991 թվականի ՆՀ-33 հրամանագիրը «ՀՀ Նախագահին առընթեր անվտանգության խորհրդի մասին», ՀՀԳԽՏ 1991.12.15/23 (1003) Հոդ. 535
5. Հայաստանի Հանրապետության Նախագահի 25.08.2008 թվականի ՆԿ-139-Ն կարգադրությունը «Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին (կարգադրությունն ուժը կորցրել է 10.08.16 նկ-145-ն) // ՀՀՊՏ 2003.12.03/59(294) Հոդ.899

Մասնագիտական գրականություն (գրքեր, դասագրքեր, հոդվածներ, բառարաններ)

6. Авакьян С.А. Размышления конституционалиста: Избранные статьи. – М.: Изд- во “Моск.Ун-та”, 2010., 560 с.
7. Аюева Е.И. Некоторые аспекты категории юридического факта // Правоведение. – 1985. - № 4., С. 67-71.
8. БасалаеваС.П. К вопросу о правовой природе трудового договора// Правоведение. - 2005. - № 4., С. 81-85
9. Панина А.Б.Трудовое право:Учебное пособие.–М.,Форум, 2004. 272с.
10. Միջազգային մասնավոր իրավունք: Դասագիրք /Ա.Հայկյանց. –Եր.:ԵՊՀ հրատ., 2010. – 560 էջ

Դատական պրկատիկայի նյութեր

11. ՀՀ Սահմանադրական դատարանի 09.09.2008 թվականի ՍԴՈ-758 որոշում
12. ՀՀ Սահմանադրական դատարանի 26.06.2015 թվականի ՍԴՈ-1222 որոշում

Ատենախոսություններ և սեղմագրեր

1. Հակոբյան Վ. Երեվանի խանության XVIII դարի երկրորդ կեսի պատմության հիմնախնդիրները ըստ մատենադարանի պարսկերեն վավերագրերի, ատենախ.-Եր., 2010, 130 էջ

ԻՆտերնետ-աղբյուրներ

13. Զավիդով Բ.Դ. Մենեջմենթը ՌԴ-ում [Էլեկտրոնային ռեսուրս]. Էլեկտրոնային 2001.No 12. URL: http://www.meviz.ru/articles/2001/1432.htm (Այցելության ամսաթիվը՝ 01.04.2021 թ.).
14. URL:http://www.regum.ru/allnews/166645.htm (Այցելության ամսաթիվը՝ 01.04.2021 թ.).
15. Ռուսական կրթական հարթակա [Էլեկտրոնային ռեսուրս]. 2000. URL: http://www.school.edu.ru/(Այցելության ամսաթիվը՝ 01.04.2021 թ.)
16. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի բացման խոսքը՝ ԱԳՆ կենտրոնական ապարատի և արտասահմանյան երկրներում Հայաստանի դիվանագիտական ծառայության գլխավոր մարմինների ղեկավարների տարեկան ժողովում: Էլեկտրոնային ռեսուրս]. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կայքը կամ www.mfa.am URL: https://www.mfa.am/ru/speeches/2019/08/27/fm_opening_remarks/9782.Այցելության ամսաթիվը՝ 01.04.2021 թ.):